ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ընդդեմ «Ազգ» թերթի՝ «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության փոխտնօրեն Դավիթ Ամիրյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» («ԲՀՀ-Հայաստան») կազմակերպության փոխտնօրեն Դավիթ Ամիրյանը՝ ընդդեմ «Ազգ» թերթում եւ նույնանուն կայքում 2019թ. հունիսի 21-ին հրապարակված «Սորոսյան հիմնադրամը չի կարող կրթել հայ երեխային» վերտառությամբ հոդվածի (հեղինակ՝ Գևորգ Գյուլումյան, https://www.azg.am/AM/2019062111)։ Ըստ բողոքի հեղինակի՝ հրապարակման մեջ խախտված են «Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» մի քանի պահանջներ։

Ա. ՓԱՍՏԵՐ

1. «Ազգ» շաբաթաթերթի 2019թ. հունիսի 21-ի համարում հրապարակվել է Գեւորգ Գյուլումյանի «Սորոսյան հիմնադրամը չի կարող կրթել հայ երեխային» հոդվածը, որում հեղինակը անդրադառնում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կազմակերպած ամառային դպրոցին, որի մասին հայտարարությունը տեղադրված է եղել նախարարության կայքում:

Հոդվածագիրը գրում է.

«Պարզվում է, որ նախարարությունն այդ ամառային դպրոցի ծրագիրն իրականացնում է ՄԱԿ-ի պարենի ծրագրի, եւ ո՛չ ավել, ո՛չ պակաս, տխրահռչակ «Բաց հասարակության հիմնադրամ» կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ: Այո, այստեղ թյուրիմացություն չկա, խոսքը արդեն հանրահայտ Սորոսյան հիմնադրամի մասին է: Մեր կրթությունն ու մշակույթը

ներառող նախարարությունը համագործակցում է մի կազմակերպության հետ, որի ոտնահետքերի տեղը անբարոյականություն ու պղծություն է բուսնում»:

«(...) Ինչպես միշտ, երեխաներին բերելու են հեռավոր գյուղերի՞ց, հայտարարելով, որ «պետությունը երեխաներին ճամբա՞ր է տանում»: Մինչեւ երեխաների «ճամբար» հասնելը ծնողներն իմանալո՞ւ են առհասարակ ինչ է նշանակում «Բաց հասարակության հիմնադրամ» եւ ո՞վ է դրա սնուցող երակ Ջորջ Սորոսը: Ծնողներն իմանալո՞ւ են, որ այդ կառույցը բարոյականության երդվյալ թշնամին է, ազգից ժողովուրդ, ժողովրդից ամբոխ կերտող «հաստոց»:

«(...) Իսկ ո՞վ է վստահ, որ հանձնաժողովի կազմում Լարա Ահարոնյանի պես մեկը չի լինելու, թագուհիղազարյաններ ու տղայից աղջկա վերածված «մասնագետներ» չեն լինելու. ընտրողներն իրենք չե՞ն: Իրենք ասելով նկատի ունեմ Սորոսյան հիմնադրամի անդամներին, որովհետեւ, եթե մի ծրագրում Սորոսյան հիմնադրամը ներկա է, Արայիկ Հարությունյանն ու իր ընկերները լսողներ ու կատարողներ են»:

«(...) Տպավորություն է, որ «ժողովրդավարություն» եզրն իրենց անվան կողքին դնող իշխանության անդամները չեն դադարում համագործակցել այդ կազմակերպության հետ, թեեւ ժողովրդի մեծ մասը դեմ է վերջինիս»:

2. 2019թ. հուլիսի 18-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ստացել է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության փոխտնօրեն Դավիթ Ամիրյանի դիմումը, որում մատնանշված են նաեւ «Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» այն դրույթները, որոնք դիմումատուի կարծիքով խախտված են։ Դիմումում ընդգծվում է հատկապես, որ հոդվածագիրը չի էլ փորձել ճշտումների համար կապվել հիմնադրամի ու նրա ներկայացուցիչների հետ։

3. Քանի որ «Ազգ» շաբաթաթերթը ԶԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնության անդամներից է եւ ստորագրել է «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը», Դիտորդ մարմինը, առաջնորդվելով իր աշխատակարգով, 2019թ. հուլիսի 18-ին տեղեկացրել է «Ազգի» գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանին, որ առաջիկայում քննելու է բողոքը եւ նշել. «քննության անաչառությունն ապահովելու համար Դիտորդ մարմինը կցանկանար ստանալ նաեւ ձեր պարզաբանումները»:

4. 2019թ. հուլիսի 29-ին Դիտորդ մարմինը ստացել է «Ազգ» թերթի

խմբագիր Հակոբ Ավետիքյանի եւ հոդվածագիր Գեւորգ Գյուլումյանի պատասխանները: Մասնավորապես, Հակոբ Ավետիքյանը նշել է, որ տեղեկությունն իրենք քաղել են նախարարության պաշտոնական կայքէջից, հետեւաբար կարիք չկար այդ տեղեկությունը ճշտելու նաեւ հիմնադրամից: Խմբագիրը նաեւ գրում է.

«Իսկ ինչ վերաբերում է պրն Ամիրյանի այն մեղադրանքին, թե «հեղինակը և խմբագրությունը քննարկվող հոդվածում նաև օգտագործում են ատելություն, թշնամանք և անհանդուրժողականություն ձևավորող բառեր, խոսք, որով խախտել են Կանոնագրի 5.2 կետով սահմանված պարտավորությունը», ասեմ, որ (...) Հասարակական կարծիք այդ կառույցի նկատմամբ վաղուց ձեւավորվել է, և բացառապես դրա հիման վրա է հիմնվել Գեւորգ Գյուլումյանը իր հոդվածը շարադրելիս (...) Հոդվածագիրը ընտրել է ոչ թե տեղեկատվական, թղթակցության կամ վերլուծության, այլ հրապարակախոսական ժանրը՝ իր կարծիքը, տեսակետը կամ տպավորությունները արտահայտելու համար, ժանր, որը չի պահանջում տարբեր կողմերի կարծիքների համադրում»:

Այնուհետեւ խմբագիրը առաջարկում է, որ Ամիրյանը հանդես գա պատասխան հրապարակմամբ, բայց մի պայմանով՝ «ապացուցել, որ այսպես կոչված Սորոսի կազմակերպությունը առնվազն չի քաջալերում միասեռականությունը, սեռափոխությունը, եւ նման այլանդակությունները Հայաստանում (...)»:

5. Դավիթ Ամիրյանը Դիտորդ մարմնին տեղեկացրեց, որ հիմնադրամը հրաժարվում է պատասխան հրապարակել «Ազգ»-ում, եթե անգամ առանց նախապայմանների լիներ այդ առաջարկը, եւ գերադասում է ստանալ Դիտորդ մարմնի եզրակացությունը:

6. Հակոբ Ավետիքյանի նամակին կցված է Գեւորգ Գյուլումյանի արձագանքը, որում կրկնվում են հոդվածում տեղ գտած դիրքորոշումներն ու որակումները:

7. Առաջնորդվելով իր Աշխատակարգի 4.2 կետով՝ Դիտորդ մարմինը բողոքի քննությունը երկարաձգել է մեկ ամսով՝ եզրակացության ընդունման վերջնաժամկետ սահմանելով 2019թ. հոկտեմբերի 18-ը:

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **ՀՀ քաղաքացիական օրենսգիրք**

Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար

համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները

2. Սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Սույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

II. **«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք**

Հոդված 8. Հերքման և պատասխանի իրավունքը

1. Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը:

III.**Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր**

1.3. հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից,

1.4. վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա,

5.2. որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում:

Գ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

- ընդունելով «Ազգ» թերթի գլխավոր խմբագրի մեկնաբանությունը, որ խմբագրությունը պարտավոր չէ պաշտոնական կայքից վերցված տեղեկությունը այլ աղբյուրից ճշտել, եւ որ հոդվածի հրապարակախոսական բնույթը ենթադրում է նաեւ որակումներ եւ հեղինակի կարծիքի արտահայտում,

- հիշեցնելով, որ լրատվամիջոցների առաքելությունը ոչ միայն տեղեկություններ եւ գաղափարներ տարածելն է, այլ նաեւ դրանք վերլուծելը, մեկնաբանելը,

- նկատի առնելով, որ իր հիշյալ առաքելությունն իրականացնելիս, այսուհանդերձ, հարկ է օգտագործել պատշաճ բառապաշար, զերծ մնալ պիտակավորումներից, որպես վիրավորանք ընկալվող արտահայտություններից եւ ձեւակերպումներից,

արձանագրում է.

«Ազգ» շաբաթաթերթի 2019թ. հունիսի 21-ի համարում հրապարակած Գեւորգ Գյուլումյանի «Սորոսյան հիմնադրամը չի կարող կրթել հայ երեխային» հոդվածում առկա են Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրի պահանջների հետ մի շարք հակասություններ:

Այսպես՝

1. «Ծնողներն իմանալո՞ւ են, որ այդ կառույցը բարոյականության երդվյալ թշնամին է, ազգից ժողովուրդ, ժողովրդից՝ ամբոխ կերտող «հաստոց» ձեւակերպումը հակասում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 1.3 կետով սահմանված՝ փաստերի եւ կարծիքների տարանջատման սկզբունքին, քանի որ հեղինակն այդ պնդումը ներկայացնում է ոչ թե որպես սեփական գնահատական, այլ որպես հանրահայտ իրողություն: Սա կարող է թյուրիմացության մեջ գցել ընթերցողին եւ այդպիսով առանց փաստական հիմքի վնաս է հասցնում է «ԲՀՀ-Հայաստան» կազմակերպության գործարար համբավին: Այդ ձեւակերպումը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով կարող է գնահատվել վիրավորական:

2. «(...) խոսքը արդեն հանրահայտ Սորոսյան հիմնադրամի մասին է: Մեր կրթությունն ու մշակույթը ներառող նախարարությունը համագործակցում է մի կազմակերպության հետ, որի

ոտնահետքերի տեղը անբարոյականություն ու պղծություն է բուսնում» արտահայտությունը կարող է գնահատվել որպես գործարար համբավի արատավորում, քանզի հոդվածում չունի որեւէ հիմնավորում, իսկ իր պատասխանում Գեւորգ Գյուլումյանի բերած կազմակերպությունների ֆինանսավորման օրինակները հիմք չեն նման գնահատականի համար:

3. «Իսկ ո՞վ է վստահ, որ հանձնաժողովի կազմում Լարա Ահարոնյանի պես մեկը չի լինելու, թագուհիղազարյաններ ու տղայից առջկա վերածված «մասնագետներ» չեն լինելու. ընտրողներն իրենք չե՞ն: Իրենք ասելով նկատի ունեմ Սորոսյան հիմնադրամի անդամներին (...)»: Այս նախադասության մեջ մարդկանց անձը վիրավորելու միտում ունեցող ձեւակերպումներ են, որոնք կարող են նաեւ որակվել որպես խտրականության դրսևորում:

4. Պատասխանի հրապարակման համար «Ազգ» թերթի խմբագրի առաջարկած նախապայմանը հակասում է ինչպես «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի պահանջին, այնպես էլ՝ անընդունելի է էթիկայի տեսակետից:

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆՆ ընդգծում է նաեւ, որ եթե համագործակցության իր առաջարկին «Ազգ» շաբաթաթերթի խմբագրի պատասխանը հիմնականում պատշաճ էր, ապա նույնը չի կարելի ասել հոդվածի հեղինակի անդրադարձի մասին, որի ոճը, ձեւակերպումները, ինչպես նաեւ երբեմն չհիմնավորված փաստարկումները միանգամայն անհարիր են լրագրողի վարքին:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հորդորում է «ԲՀՀ-Հայաստան» կազմակերպությանը, որ նման դեպքերում օգտվի «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պատասխանի հրապարակման իրենց իրավունքից:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի
2019թ. հոկտեմբերի 16-ի նիստում,
Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: